քրիստոնէականներին: Նրանցից ամենահետաքրքրականը Ամիդայի արձանն էր, իր ամբողջ հասակովը ձիգ կանգնած, բարի ու մեղմ դիմագծերով ու ձեռքերը այնպէս բռնած, կարծես օրհնելիս լինէր: Նա յաւերժական ու գաղափարական լոյսի մարմնացումն է:

Միջին, ամենամեծ սեղանի առջեւ կախուած էր ոսկի ծոպերով մի ամպհովանի, որի տակը դարսուած էին զանազան զարդեր, յղկած արկղներ, տուփեր. սրանց մէջ պահւում են սրբազան ձեռագիրները:

Փայտէ վանդակի միւս կողմը ծունկ էր չոքած մի բօնզա (քահանայ) եւ ձեռքի փոքրիկ փայտով խփում էր անդադար կաշէ բարձին, կրկնելով շարունակ միեւնոյն խօսքերը. «ամնա՛, ամնա՛, այդա՛, այդա՛»: Խօսքերը մնում էին նոյնը, բայց ձայնի ելեւէջը փոխւում էր անընդհատ. մերթ բարձրանում էր, մերթ իջնում, բայց երբէք դադար չէր առնում: Դրան մօտ նստած էին մի քանի ուրիշ Բօնզաներ, իրանց աղօթքը արդէն վերջացրած:

Նրանցից մէկը ինձ տոմսակ տւեց 5 ցենտով (կոպէկ), վանքի սրբազան սենեակները դիտելու համար:

Զիօ-ինը բուդդհիստ Ժօդօ կոչւող աղանդի գլխաւոր վանքն է: Այդ աղանդի հիմնադիրը Ենկօ-Դայշի էր, որ 13-րդ դարում քարոզեց «փրկութեան վարդապետութեան» իր նոր ըմբռնումը, որով հաւատացողի համար ճամփայ էր բացւում դէպի ջինջ աշխարհը, դէպի երկինքը, ուր բազմած է Ամիդան: Այդ տեղից էլ աղանդը կոչւեց Ժօդօ (Pure Zano):